Digitally signed by AVETISYAN ZAVEN 3511590175
Date: 2023.11.13 19:26:13 AMT

Հաստատում եմ

Դպրոցի տնօրեն Զ.Ավետիսյան

# ԴԱՍՂԵԿԻ ԺԱՄԵՐ
# ԹԵՄԱՏԻԿ
# ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ
# VIII –IX
# ԴԱՍԱՐԱՆ

Լ.ԴԵՂՈՅԱՆ
2023-2024 ուս.տարի

# ***I կիսամյակ***
# ***Կրթական դաստիարակչական աշխատանքների հիմնական ուղղությունները***

## ***1. Ներածություն (դասարանի ընդհանուր բնութագիրը)***

VIII դասարանում սովորում է 4 աշակերտ՝ 2 տղա և 2 աղջիկ, IX դասարանում 2 աշակերտ՝ 1տղա և 1 աղջիկ: Բոլորը ապահովված են դասագրքերով և անհրաժեշտ գրենական պիտույքներով: Դասարանում ստեղծված է աշակերտական համերաշխ կոլեկտիվ , որտեղ իշխում է փոխադարձ հարգանքը, ընկերական սերը և համերաշխությունը: Դասարանը պայքարում է կարգապահության , օրինակելի վարքի և բարձր առաջադիմության համար:

***Առաջնորդվում ենք <<Սովորել սովորելու համար կարգախոսով***>>:

## ***2. Ուստարվա ընթացքում նախատեսվող ուսումնադաստիարակչական աշխատանքները***

ա/Համախմբել դասարանը ,դարձնել համերաշխ կոլեկտիվ:
բ/ Աշակերտների նկատմամբ ցուցաբերել անհատական մոտեցում:
գ/ Ապահովել դասարանի ընդհանուր զարգացվածության մակարդակը, հասնել բոլոր աշակերտների գիտելիքների որակի բարձրացմանը, կարևորել ավարտական քննական առարկաները (IX դասարանում):
դ/Երեխաների մեջ դաստիարակել հայրենասիրություն, հարգանք և հոգատարություն մեծերի նկատմամբ:
ե/Մշակել կուլտուրական վարքի հմտություններ՝ ճիշտ և գեղեցիկ դիմելաձև, խոսքի կուլտուրա:
զ/ Կարևոր է, որ աշակերտի վարքը լինի իմաստավորված և գիտակցված:
է/ Ուսուցման ընթացքում միաժամանակ զուգակցել օգտակարը և հաճելին:

## 3. Հայեցի դաստիարակություն
### - Հոգևոր դաստիարակություն

*Հոգևոր դաստիարակության կարևոր նախապայմանը բարությունն է: Ազգասիրության ճիշտ ընկալման միջոցով աշակերտները կդառնան հայրենասեր, կպահպանեն լեզուն ու կրոնը:Ծանոթացնել հայ Առաքելական եկեղեցու տաղավար տոներին, լսել երեխաների կածիքը, այս կամ այն եկեղեցի այցելություն կազմակերպելու հարցում: Կարևորել եկեղեցու նշանակությունը և դերը: Կատարել քննարկումներ եկեղեցի և այլ մշակույթի օջախներ կատարած այցերից ունեցած տպավորությունների մասին:*

### - Գեղագիտական դաստիարակություն

*Զարգացնել աշակերների գեղարվեստական մտածողությունը, ստեղծագործական երևակայությունը, տեսողական հիշողությունը և տարածական պատկերացումները: Արթնացնել հետաքրքրություն գեղեցիկի նկատմամբ՝ արվեստում և իրականության մեջ: Մեծ ուշադրություն դարձնել ազգագրական, ժողովրդական ինչպես նաև դասական երգ-երաժշտությանը: Կատարել քննարկում հայ և արտասահմանյան կոմպոզիտորների, նկարիչների, այլ արվեստագետների գործերից: Կազմակերպել տեսաֆիլմերի դիտում և սահիկաշարի միջոցով պրեզենտացիաների կազմակերպում համակարգչային կաբինետում:*

### - Ռազմահայրենասիրական դաստիարակություն

*Իններորդ դասարանցին և դպրոցի յուրաքանչյուր աշակերտ հպարտությամբ պետք է իմանա Հայաստանի Հանրապետության օրհներգը: Իմանա Հայաստան պետության սահմանները անառիկ պահելու կարևորությունը, հարևան պետությունների հետ հարաբերությունները և իրեն պատկերացնի հայոց բանակի ապագա զինվոր:*

*Կազմակերպել տեսաֆիլմերի դիտումներ վերոհիշյալ թեմաներով և կատարել քննարկումներ: Ավելի կարգապահ և հետևողական լինել ռազմագիտության դասերին:*

*- Ֆիզիկական դաստիարակություն*

*Ապահովել սովորողների ֆիզիկական դաստիարակությունը: Ֆիզիկական կուլտուրայի անընդմեջ պարապմունքների ընթացքում ներմանել հետաքրքրություն սպորտի, առողջ ապրելակերպի վերաբերյալ: Ծանոթացնել հայ և այլ ազգի մարզիկների նվաճումների հետ: Ակտիվ մասնակցություն սպորտային տարբեր միջոցառումներին:*

*- Աշխատանքային դաստիարակություն*

*Աշխատասիրությունը հիմք է հանդիսանում ամեն հաջողությունների: Դրա համար անհրաժեշտ է զարգացնել բարեխիղճ վերաբերմունք դեպի աշխատանքը և պարտաճանաչությունը: Սկսած գործը հասցնել ավարտին: Երբեմն ուսման մեջ թերացողները հաջողակ են լինում ֆիզիկական աշխատանք կատարելու գործում: Իզուր չէ ասված <<Մարդը աշխատանքով է գեղեցիկ>>:*

*- Բնապահպանական դաստիարակություն*

*Արդի դարաշրջանում շատ մտահոգիչ է բնապահպանության հիմնախնդիրը:*

*Հայրենի բնաշխարհի պահպանումն ու խնամքը շատ կարևոր հիմքեր պետք է ունենա յուրաքանչյուր անձի մոտ:*

*Տեսնել, զգալ, գնահատել բնության գեղեցկությունը: Նրա հետ վերաբերվել այնպես, ինչպես սեփական երեխայիդ հետ: Լինել հետևողական ծառատնկման աշխատանքներին, ակտիվ մասնակցել շաբաթօրյակներին, պայքարել ծխելու դեմ:*

*- Դպրոց-ընտանիք կապը*

*Ստեղծել ծնողական խորհուրդ: Յուրաքանչյուր ամիս հրավիրել ծնողական ժողով, որի միջոցով ապահովվել դպրոց և ընտանիք կապը: Կազմակերպել զրույցներ սովորողների առողջության, հանգստի, խաղի, ուսուցման ճիշտ կազմակերպման վերաբերյալ: Նաև դպրոց-ուսուցիչ-ծնող-երեխա փոխհարաբերությունների վերաբերյալ: Ուշադիր լինել սովորողների սոցիալական վիճակին:*

# VIII - IX *դասարան*

| *h/h* | *ԱԱՀ* | *Ծնող. ամսաթիվ* | *Սեռ* | *կարգավիճակ* |
|---|---|---|---|---|
| **1.** | *Ավանեսյան Արեն Կարենի* | **05/09/2010** | *ար.* | *անապահով* |
| **2.** | *Գրիգորյան Լիանա Աբրիկի* | **30/06/2010** | *իգ.* | *անապահով* |
| **3.** | *Գրիգորյան Սյուզաննա Դավիթի* | **15/07/2010** | *իգ.* | *ապահովված* |
| **4.** | *Մարգարյան Վարդան Էդգարի* | **04/12/2010** | *ար.* | *ապահովված* |
| **5.** | *Կարապետյան Մանվել Սամվելի* | **30/08/2009** | *ար.* | *ապահովված* |
| **6.** | *Մարտիրոսյան Անի Սարգսի* | **02/08/2009** | *իգ..* | *ապահովված* |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |

# ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

| *Ուս/2* | *Ուս. աշխատանքի բովանդակությունը* | *Կատարման ժամկետը* | *Կատարող* |
|---|---|---|---|
| **1** | Կազմակերպչական հարցեր կապված դասագրքերի, գրենական պիտույքների հետ:<br>Ընտրել դասարանի ակտիվ և ավագ: | 06.09.2023թ. | դասղեկ |
| **2** | Կարգապահական հարցեր: Զրույց տղաների հետ <<Ընկերական հարբերություններ>> թեմայով: | 13.09.2023թ. | դասղեկ |
| **3** | ՀՀ Անկախության 32 ամյակն է: Քննարկում <<Ազատություն>>, <<Անկախություն>> թեմայով: | 20.09.2023թ. | դասղեկ |
| **4** | Զրույց աղջիկների հետ <<Միջանձնային հարաբերություններ>> թեմայով: | 27.09.2023թ. | դասղեկ |
| **5** | Շնորհավոր <<Ուսուցչի տոն>>, ասույթներ: | 04.10.2023թ. | դասղեկ |
| **6** | Անցկացնել զրույց գիրք կարդալու,գրքի կարևորության և գրագիտության մասին: | 11.10.2023թ. | դասղեկ |
| **7** | Այցելություն Էրեբունի թանգարան: | 18.10.2023թ. | դասղեկ |
| **8** | Անցկացնել զրույց գիտելիքի կարևորության մասին: Գիտելիքի, արդի մտածողության, արժեքային համակարգի, կարողությունների և հմտությունների մասին: | 01.11.2023թ. | դասղեկ |
| **9** | Քաղավարության կանոնների հիշեցում:<br>Այցելություն նույն թեմայով կինոդիտման: | 08.11.2023թ. | դասղեկ |
| **10** | Կատարված կինոդիտման քննարկում | 15.11.2023թ. | դասղեկ |
| **11** | Քննարկում ‹‹Նախընտրելի առարկաներ>> թեմայով | 22.11.2023թ. | դասղեկ |
| **12** | Սուր վարակիչ հիվանդությունները և նրա վնասակար հետևանքները | 29.11.2023թ. | դասղեկ |
| **13** | Բնության ահեղ երևույթներ , երկրաշարժ | 06.12.2023թ. | դասղեկ |
| **14** | Զրույց ընկերասիրության մասին:<br>Թեմային համապատասխան կինոդիտում | 13.12.2023թ. | դասղեկ |
| **15** | Պատրաստվում ենք Ամանորին, տոնածառի և դասասենյակի զարդարում | 20.12.2023թ. | դասղեկ |

| | | | |
|---|---|---|---|
| ***II կիսամյակ*** | | | |
| **16** | Կազմակերպչական հարցեր, 2-րդ կիսամյակի հետ կապված (դասացուցակ, առաջադիմություն, կարգապահություն): | 10.01.2024թ. | դասղեկ |
| **17** | Քննության հետ կապված հարցերի քննարկում: Ընտրովի քննական առարկաների ընտրություն: | 17.01.2024թ. | դասղեկ |
| **18** | Ես հայ եմ ունեմ մեկ հայրենիք: Սովորում ենք կրակել | 24.01.2024թ. | դասղեկ |
| **19** | Ովքեր են մեր հարևանները և ինչպիսի հարաբերություններ ենք ակնկալում միմյանցից | 31.01.2024թ. | դասղեկ |
| **20** | Տյառնընդառաջ տոնի խորհուրդը: Նախապատրաստական աշխատանք տոնակատարության: | 07.02.2024թ. | Դասղեկ. ՀԵՊ - ի ուսուցիչ |
| **20** | Սիրով նվիրում եմ գիրք: Հիշում ենք մեր մեծերն | 14.02.2024թ. | դասղեկ |
| **21** | Լինել ճշմարտախոս ու բարի | 21.02.2024թ. | դասղեկ |
| **22** | <<Գարուն>> խորագրով ասմունքի դաս | 28.03.2024թ. | դասղեկ |
| **23** | Գրել շարադրություն և քննարկել <<Մայրս ամենան է>> վերնագրով: | 06.03.2024թ. | դասղեկ |
| **24** | Սերը, հարգանքը,նվիրումը, ներողամտությունը ընտանիքում և դպրոցում: | 13.03.2024թ. | դասղեկ |
| **25** | Սուրբ Զատիկ: Այցելություն եկեղեցին | 20.03.2024թ. | դասղեկ |
| **26** | Առաջնորդվում ենք <<Սովորել սովորելու համար>> կարգախոսով: | 03.04.2024թ. | դասղեկ |
| **27** | Դառնալ հայրենիքի արժանավոր զավակ, որի համար պետք է ունենալ գիտելիք, հմտություն, դիրքորոշում, արժեք, կարողունակություն: | 10.04.2024թ | դասղեկ |
| **28** | Մեծ եղեռնի զոհերի հիշատակին այց Ծիծեռնակաբերդ | 17.04.2024թ. | դասղեկ |
| **29** | Աշխատավորի տոն: Գնահատել ժամանակը և օրը կազմակերպել ճիշտ: | 08.05.2024թ. | դասղեկ |
| **30** | Քննարկում քննական առարկաների հետ կապված | 15.05.2024թ. | դասղեկ |
| **31** | Առաջադիմության քննարկում: II կիսամյակի և տարեկան գնահատականների ամփոփում | 22.05.2024թ. | դասղեկ |
| **32** | Վերջին դաս | 24.05.2024թ. | դասղեկ |

## ԴԱՍԱՐԱՆԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱԴՊՐՈՑԱԿԱՆ, ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԵՎ ՄԱՐԶԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻՆ

| ***Անցկացման ժամկետը*** | ***Միջոցառման անվանումը*** | ***Անցկացման վայրը*** |
|---|---|---|
| 01.09.2023թ. | Գիտելիքի օր | դպրոց |
| 22.09.2023թ. | ՀՀ անկախության օր | դպրոց |
| 05.10.2023թ. | Ուսուցչի տոն | դպրոց |
| 22.12.2023թ. | Ամանորյա դիմակահանդես | դպրոց |
| 29.01.2024թ. | <<<Հայոց փառապանծ բանակ>> Այց Եռաբլուր | Եռաբլուր |
| 13.02.2024թ. | Տյառնընդառաջ տոնակատարություն | դպրոցի բակ |
| 08.03.2024թ. | Գարնանամուտ: Մայրության տոն | դպրոց |
| 31.03.2024թ. | Սուրբ Զատիկ | դպրոց |
| 24.04.2024թ. | Հիշատակի օր նվիրված Մեծ Եղեռնին, այց Ծիծեռնակաբերդ | Ծիծեռնակաբերդ |
| 09.05.2024թ. | Այցելություն <<Մայր Հայաստան>> հուշահամալիր | Հաղթանակի զբոսայգի |
| 24.05.2024թ. | Վերջին դաս | դպրոց |

## ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՄԱՄՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱՄԻՐԱԿԱՆ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԽՄԲԱԿՆԵՐԻ

| N | նախասիրական-առարկայական խմբակ | գեղարվեստական երաժշտական խմբակներ | Մարզական խմբակներ | Այլ խմբակներ |
|---|---|---|---|---|
| 1. | Կարապետյան Մանվել | | Ֆուտբոլ | |
| 2. | Մարգարյան Վարդան | | Ֆուտբոլ | |
| 3. | Գրիգորյան Լիանա | Նկարչություն | | |
| 4. | | | | |
| 5. | | | | |
| 6. | | | | |
| 7. | | | | |
| 8. | | | | |
| 9. | | | | |
| 10. | | | | |
| 11. | | | | |

## ԴԱՍՂԵԿԻ ԺԱՄ

| 1-ին կիսամյակ | | 2-րդ կիսամյակ | |
|---|---|---|---|
| Շաբաթվա օրը | դասաժամը | Շաբաթվա օրը | դասաժամը |
| Չորեքշաբթի | 8-րդ | Չորեքշաբթի | 8-րդ |

# ԱՇԽԱՏԱՆՔ ԾՆՈՂՆԵՐԻ
# ՀԵՏ

| *Անցկացման օրը* | *Թեմա* | *Քննարկվող հարցերը* | *Ուսուցչի անուն, ազգանուն* | *Ծանոթություն* |
|---|---|---|---|---|
| 03.09.2023թ. | Դասղեկ-ծնող, ծնող-դպրոց համակործակցության անհրաժեշտություն: | Ծնողներին կապել դասարանին,դպրոցին և մեկնաբանել անհրաժեշտությունն ու արդյունավետությունը: | Լ.Դեղոյան | |
| Հոկտեմբեր ամսվա ընթացքում | Օգնել սովորողին հաղթահարելու ծագած դժվարությունը: | Օգնել սովորողին դասերի ընթացքում լինել կենտրոնացած: | Լ.Դեղոյան | |
| Նոյեմբեր ամսվա ընթացքում | Աշխատասիրություն, կարողունակություն, դաստիարակություն, կարգապահություն: | Սովորել սովորելու, մշակութային, ժողովրդավարական, քաղաքացիական, ինքնաճանչողական և այլ կարողունակություններ: | Լ.Դեղոյան | |
| Դեկտեմբեր ամսվա ընթացքում | Վարել երկխոսություն՝ ինչպես բարձրացնել աշակերտի պատասխանատվությունը: | Կարգապահությունը բխում է պատասխանատվությունից: | Լ.Դեղոյան | |
| | | | | |

## *ԾՆՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ*

| *Անցկացման օրը* | *Քննարկվող հարցերը* | *Համառոտ բովանդակությունը* | *Ծանոթություն* |
|---|---|---|---|
| 03.09.2022թ. | Կազմակերպչական հարցեր:Ծնողկոմիտեի ընտրություն: | 2023-2024 ուստարվա առաջին ծնողական ժողով: Որոշեցին լինել ուշադիր,հետևողական,օգնել դպրոցին ցանկացած պահին և ցանկացած հարցում: | |
| Հոկտեմբեր ամսվա ընթացքում | Ամփոփել առաջադիմությունը արձակուրդից առաջ: | Առանձին խոսել յուրաքանչյուր աշակերտի մասին,տալ հրահանգներ: | |
| Նոյեմբեր ամսվա ընթացքում | Անցկացնել զրույց հաճախումների և կարգապահության հետ կապված: | Հաճախակի բացակայող և ուսման մեջ թերացող աշակերտների ծնողների հետ կատարել առանձնազրույց: | |
| Դեկտեմբեր ամսվա ընթացքում | Առաջին կիսամյակի ամփոփում,անելիքները: | Հորդորել ծնողներին հետևողական լինեն հանձնարարականների կատարմանը: | |

## *ԾՆՈՂԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԸ*

| | *ազգանուն, անուն, հայրանուն* |
|---|---|
| ***Նախագահ*** | Գրիգորյան Արմինե |
| ***Անդամներ*** | Մարտիրոսյան Սուսաննա<br>Կարապետյան Ռուզաննա |

# ԱՇԽԱՏԱՆՔ ԴԱՍԱՐԱՆԻ ԾՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԵՏ

| *Անցկացման օ/ա/տ* | *Քննարկվող հարցերը* | *Զրույցի համառոտ բովանդակությունը* | *Ծանոթություն* |
|---|---|---|---|
| Սեպտեմբեր ամսվա ընթացքում | Սահմանել ամենօրյա հսկողություն սովորողների դաստիարակության գործում:Ապահովել դպրոց-ընտանիք կապը: | Ծնողական խորհուրդը և դասղեկը նույն նպատակն են հետապնդում: | Որոշեցին լինել հետևողական: |
| Հոկտեմբեր ամսվա ընթացքում | Սովորողների վարքագծի հետ կապված հարցեր (լինել հետևողական ոչ միայն դպրոցում և այլուր): | Ծնողի անձնական օրինակի կարևորությունը: | Յուր. ծնող աշխատում է լավ օրինակ լինել իր երեխային: |
| Նոյեմբեր ամսվա ընթացքում | Փորձենք հասկանալ երեխայի ներաշխարհը: Առաջնորդվենք <<Լինել հարգալից>> կարգախոսով: | Կարևոր է,որ յուրաքանչյուր երեխայի մեջ տեսնեն անհատ: | |
| Դեկտեմբերի վերջ | Հարկավոր է ձգտել ճիշտ դաստիարակության , որ հետո ստիպված չլինենք զբաղվել վերադաստիարակությամբ: | Դաստիարակչական աշխատանքում չկան դատարկ բաներ,ամենափոքրիկ դեպքն անգամ չպետք է անուշադրության մատնել,որի համար պետք է ունենալ նպատակային և լավ մշակված ծրագիր: | |